ժողովուրդը ապրել է, կեանք է վարել շնորհիւ իր արհեստների, նրան պահպանել է միմիայն աշխատաւորութիւնը–դիւղատնտեսութիւնը: Սուլթան Սուլէյմանի օրով, Իբրահիմ փաշայի (Հայ տէրտէրի որդի) կազմակերպած տարազների կերպասն ու ձեւը Հայ արհեստաւորի շնորհքն էր, որոնք որպէս նորաձեւութիւն փոխադրուեցան Եւրոպա 1530ին: Օսմանեան պետութեան ամենագլխաւոր որմադիրները, խալֆաները (ճարտարապետ), զինագործները–Բայբուրդից էին, ամենաընտիր ենիչարական դաշոյնը եւ սիփայիների շէշխանաները Բայբուրդցիներն էին պատրաստում: Եւրոպական մեքենական արտադրութիւնները խլեցին Հայ արհեստաւորների վերջին պատառը եւ նրան կործանեցին:

Ճորոխի Աւազանի բնական բերքերի հարստութիւնը–անտառները, պղինձը, ոսկին, արծաթը, երկաթը եւ պողպատը բնակչութեան առաջնորդել է զարգացնելու երկրագործութեան հետ զուգընթացաբար արհեստները: Այս երկրին կից Կոլա, Արդահան, Զլդր (լճի շուրջը), Զաւախք, Վանանդ, Բասեն ու Կարին գաւառների բնակչութիւնը դաժան կլիմայի պատճառով դարուն, ամառ եւ աշուն աշխատել է չարաչար. իսկ ձմեռը պառկել ու կերել է. այնինչ Տայեցին ձմեռը մտել է անտառ, սարքել է իր ճախարակը, տախտակ է ձեւել, սնդուկ է շինել. կաղ-